# ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԻՍՈՒՆ ՏԱՐԻՆ

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Հայաստանի գիտությունների ակադեմիան 1993 թ. նոյեմբերին բոլորեց իր հիմնադրման հիսնամյակը։ Հայկական ակադեմիայի ստեղծումը նոր փայլուն էջ բացեց մեր ժողովրդի դիտական մտքի ու մշակույթի բազմադարյան պատմության մեջ։*

*ՀԳԱ կազմակերպման գործում մեծ դեր խաղաց Խորհրդային Միության գիտությունների ակադեմիան։ Նրա նախաձեռնությամբ դեռևս 1935 թ. Երևանում հիմնվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը (ԱրմՖԱՆ)։ Գիտական այդ կենտրոնը ղեկավարում էր ականավոր գիտնական-երկրաբան ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, որը մինչ այդ արդեն եղել էր Հայաստանում, զբաղվել երկրաբանական պրոբլեմների ուսումնասիրությամբ։ 1938 թ. ԱրմՖԱՆի նախագահ ընտրվեց հանրահռչակ գիտնական ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։*

*ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի անմիջական օգնությամբ ԱրմՖԱՆում ծավալվեց գիտահետազոտական լուրջ աշխատանք։ Հասարակական գիտություններին, մասնավորապես հայագիտական հետազոտությունների գծով կատարվող աշխատանքներին զուգընթաց նախապատերազմյան շրջանում հանրապետությունում մեծ աշխատանք կատարվեց քիմիական, երկրաբանական, կենսաբանական, գյուղատնտեսական և բժշկական գիտությունների բնագավառներում։ Հատկանշական է նաև այն սերտ կապը, որը ստեղծվեց գիտահետազոտական հիմնարկների և արտադրական ձեռնարկությունների միջև. հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման շատ հարցեր իրենց լիարժեք պատասխանն էին գտնում գիտական հետազոտությունների շնորհիվ։*

*ԱրմՖԱՆում կատարվող գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր արդյունքների ամփոփմանն էր նվիրված 1940 թ. նոյեմբերին Երևանում տեղի ունեցած գիտական նստաշրջանը։ Զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ Լևոն Օրբելին, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, հանրապետության գիտական մտքի երիտասարդ ներկայացուցիչներ։ Մեծ հետաքրքրություն առաջացրին նաև ռուս նշանավոր գիտնական-ակադեմիկոսների՝ պատմաբան Բորիս Գրեկովի և մեքենաշինարար Եվգենի Զուդակովի զեկուցումները։ Նստաշրջանը ցույց տվեց, որ ԱրմՖԱՆում ձեռնարկվել են կարևոր նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ, որոնք աչքի են ընկնում ինչպես մտահղացման ու կատարման յուրօրինակությամբ, այնպես էլ գիտության տվյալ ճյուղի առանցքային հարցերի լայն ընդգրկումներով։*

*ԱրմՖԱՆի աշխատանքների հաջողությունները անվիճելի դարձրին այն եզրակացությունը, թե անհրաժեշտ է, որ ինքնուրույն ակադեմիա ստեղծվի Հայաստանում։ Եվ ահա 1943 թ. նոյեմբերին՝ Հայրենական պատերազմի ահեղ օրերին հիմնադրվեց մեր հանրապետության գիտությունների ակադեմիան։*

*Ի կատարումն ԽՍՀՄ կառավարության 1943 թ. հոկտեմբերի 29-ի (№ 1189) որոշման, Հայաստանի կառավարությունը՝ ժողովրդական կոմիսար-*

ների խորհուրդը, նույն թվականի նոյեմբերի 10-ին որոշում ընդունեց, որի մեջ ասված էր. Հայաստանի գիտական հիմնարկների ցանցի լայն զարգացումը, բարձրորակ գիտական աշխատողների աճը և տնտեսության ու մշակույթի զարգացման գործում նրանց արդյունավետ աշխատանքը, ի շահ գիտական աշխատանքի հետագա, ավելի նպատակասլաց զարգացման և հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը մի ղեկավար կենտրոնում միավորելու նպատակով՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի հիման վրա Հայաստանի մայրաքաղաք Երևանում կազմակերպել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիա։ Այնուհետև որոշման մեջ նշված էին այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին ակադեմիա հիմնադրելու համար։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին, հիմնադիր անձնակազմի համար գիտական հիմնարկների, բուհերի գիտական խորհուրդների, ստեղծագործական կազմակերպությունների կողմից առաջադրվեց 44 թեկնածու։ Ժողկոմխորհը 1943 թ. նոյեմբերի 25-ին լսելով կառավարական հանձնաժողովի առաջարկությունները, որոշեց հաստատել ակադեմիայի հիմնադիր կազմը՝ բաղկացած 23 անդամից (ակադեմիկոսներից)։ Ակադեմիան իր կազմի մեջ ընդգրկեց բնական և հասարակական գիտությունների գծով ականավոր գիտնականների, որոնք գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներ էին և ակտիվ մասնակցում էին Հայաստանի գիտամշակութային կյանքին։ ՀԳԱ առաջին կազմի մեջ մտան Մանուկ Աբեղյանը (գրականագիտություն), Աբրահամ Ալիխանովը (ֆիզիկա), Արտեմ Ալիխանյանը (ֆիզիկա), Հրաչյա Աճառյանը (լեզվաբանություն), Հրաչյա Բունիաթյանը (կենսաքիմիա), Վարդան Գուլքանյանը (գենետիկա), Իվան Եղիազարովը (հիդրոէներգետիկա), Ալեքսանդր Թամամշևը (անասնաբուծություն), Միքայել Թումանյանը (գյուղատնտեսություն), Վաչե Իսագուլյանցը (քիմիա), Ավետիք Իսահակյանը (գրականություն), Սահակ Կարապետյանը (ֆիզիոլոգիա), Խաչատուր Կոշտոյանցը (ֆիզիոլոգիա), Ալեքսանդր Հակոբյանը (թերմոդինամիկա), Վիկտոր Համբարձումյանը (աստղաֆիզիկա), Լևոն Հովհաննիսյանը (բժշկագիտություն), Գրիգոր Ղափանցյանը (լեզվաբանություն), Ստեփան Մալխասյանը (բանասիրություն), Հակոբ Մանանդյանը (պատմություն), Կոնստանտին Պաֆենհոլցը (երկրաբանություն), Արսեն Տերտերյանը (գրականագիտություն), Հովսեփ Օրբելին (արևելագիտություն) և Լևոն Օրբելին (ֆիզիոլոգիա)։

Ժողկոմխորհը հաստատեց գիտությունների ակադեմիայի կանոնադրությունը։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացումը տեղի ունեցավ 1943 թ. նոյեմբերի 29-ին։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ Վիկտոր Համբարձումյանը և Վարդան Գուլքանյանը։

Հիմնադիր ժողովում որոշում ընդունվեց, որ ակադեմիայի անձնակազմը պետք է բաղկացած լինի իսկական անդամներից (ակադեմիկոսներից), պատվավոր անդամներից և թղթակից անդամներից։ Հետագայում ԳԱ կանոնադրությամբ սահմանվեց նաև «Հայաստանի գիտությունների արտասահմանյան անդամ» կարգավիճակը։ Առաջին պատվավոր անդամ ընտրվեց նշանավոր ռուս բուսաբան-աշխարհագետ, ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Վլադիմիր Կոմարովը։

Ակադեմիայում հիմնարար աշխատանք ծավալվեց գիտության ու տեխնիկայի հրատապ ուղղությունների գծով։ Հատկապես նշանակալից և արգասավոր էին այն հետազոտությունները, որոնք սկսվեցին ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բնագավառում։ Պատերազմի տարիներին այդ հետազոտությունները հիմնականում ուղղված լինելով ռազմաճակատի պահանջները բավարարելու նպատակին՝ արտադրական ձեռնարկությունների առջև ծառացած գիտատեսական ու կիրառական խնդիրների լուծմանը, միաժամանակ սկզբնավորեցին գիտական նոր ուղղություններ, որտեղ

կատարվող առաջին աշխատանքների արդյունքները լայն ճանաչում գտան, դուրս եկան հանրապետության սահմաններից։ Հետագա տարիներին ակադեմիայի կազմում ընդգրկվեցին Մարտիրոս Սարյանը, Ստեփան Զամբարյանը, Արամ Խաչատրյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Էդգար Հասրաթյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Բարդուղիմեոս Ֆանարջյանը, Արմենակ Մնջոյանը, Հրաչյա Բունիաթյանը, Հովհաննես Մաղաքյանը, Բենիամին Մարգարյանը, Արմենակ Նազարովը, Արտաշես Շահինյանը, Արաքսյա Բարայանը, Արարատ Ղարիբյանը, Լեոն Մելիքսեթ-Բեկը, Վահան Ռշտունին և ուրիշներ։

Անչափ մեծ են ԳԱ պրեզիդենտներ Հովսեփ Օրբելու և Վիկտոր Համբարձումյանի ծառայությունները Հայաստանի ԳԱ կազմավորման և հետագա գործունեության բնագավառում։ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին իր բացառիկ տաղանդի և հեղինակության շնորհիվ ապահովեց նորաստեղծ ակադեմիայի ամուր հիմքերի կառուցումը, իսկ աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը տասնամյակներ շարունակ գլխավորեց մեր դիտության կառը։ Երախտագիտ հայ ժողովուրդը բարձր է գնահատում նրանց անուրանալի ծառայությունները, հպարտանում նրանցով։

Որպես պրեզիդենտ Վ. Համբարձումյանը ղեկավարել է ակադեմիան 1947 թ. մինչև 1993 թ. ապրիլը, որից հետո՝ ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր պրեզիդենտ։ Համբարձումյանի անվան հետ են կապված ամենից առաջ այն հաջողությունները, որ ակադեմիան ձեռք է բերել իր գոյության վերջին տասնամյակների ընթացքում։

Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը 1993 թ. ապրիլի 8-ին ընտրեց ակադեմիայի նոր ղեկավարություն։ Նույն թվականի մարտին Հանրապետության նախագահի հրամանով ՀԳԱ վերանվանվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա։

Ներկայումս մեր ակադեմիան ունի 6 բաժանմունք։ Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բաժանմունքը միավորում է Մաթեմատիկայի ինստիտուտը, Բյուրականի աստղադիտարանը, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը և նրա ավտոմատացման միջոցների Ղափանի փորձնական գործարանը, Երևանի փորձնական գործարանը, ինստիտուտին առընթեր Վերգետնյա գեոֆիզիկական սեյսմականխագուշակման համակարգերի հատուկ կոնստրուկտորական բյուրոն։ Մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունքում ընդգրկված են Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Մեխանիկայի ինստիտուտը, Ճարտարագիտական կենտրոնը, Կոմպոզիցիոն նյութերի ՀԿՏԲ, Հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտը, Վիբրոտեխնիկայի բաժինը։

Քիմիական և երկրաբանական գիտությունների բաժանմունքը միավորում է Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը և նրա փորձնական գործարանը, Օրգանական քիմիայի ինստիտուտը, Կենսաքիմիայի ինստիտուտը, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը և նրա հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրոն, Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնը,

Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմարանության ինստիտուտը, Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը։

**Կենսաբանական գիտությունների** բաժանմունքում ընդգրկված են Բուսաբանության ինստիտուտը և Բուսաբանական այգին, Կենդանաբանության ինստիտուտը և նրա կիրառական կենդանաբանության կենտրոնը, Միկրոբիոլոգիայի ինստիտուտը, Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտը, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը, Ա. Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը և նրա հատուկ քիմիադեղաբանական տեխնոլոգիական բյուրոն։

**Պատմության և տնտեսագիտության** բաժանմունքը միավորում է՝ Պատմության ինստիտուտը, Տնտեսագիտության ինստիտուտը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Արևելագիտության ինստիտուտը, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը, Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժինը։

**Փիլիսոփայության և բանասիրության** բաժանմունքի կազմում են գտնվում Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը, Արվեստի ինստիտուտը, Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը, Փիլիսոփայության ամբիոնը, Օտար լեզուների ամբիոնները։

ՀՀ ԳԱԱ կազմի մեջ են մտնում նաև ավելի քան երկու տասնյակ հասարակական գիտական կազմակերպություններ՝ գիտական պրոբլեմային խորհուրդներ, ընկերություններ, գիտական հանդեսներ և այլն։

Ակադեմիայի գոյության 50 տարիների ընթացքում տեղի են ունեցել 18 ընտրություններ։ Ընդհանուր առմամբ ընտրվել են՝ 103 իսկական անդամ և 161 թղթակից անդամ, 11 պատվավոր անդամ, 15 արտասահմանյան անդամ։ Այսօր ակադեմիայի կազմում կան 39 իսկական անդամ, 63 թղթակից անդամ, 3 պատվավոր անդամ, 9 արտասահմանյան անդամ։ Ակադեմիայի 2847 գիտական աշխատողներից 309-ը գիտության դոկտորներ են, 1374-ը գիտության թեկնածուներ։

Որպես հանրապետության գիտական մտքի գլխավոր կենտրոն, ՀԳԱ համագործակցում է դիտաճյուղային ինստիտուտների և բուհերի հետ՝ գիտահետազոտական աշխատանքների կատարման հարցերում։ Վճռական է ակադեմիայի ներդրումը այն բանում, որ Հայաստանում «մշտական գրանցում» են ստացել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, բնական գիտությունների այնպիսի ժամանակակից ճյուղեր, ինչպիսիք են՝ աստղաֆիզիկան, մաթեմատիկան, ֆիզիկան, էլեկտրատեխնիկան, ռադիոֆիզիկան, էլեկտրոնիկան, մեխանիկան, հաշվողական տեխնիկան և ավտոմատացման համակարգերը, քիմիան, նուրբ օրգանական քիմիան, ֆիզիկական քիմիան, անօրգանական քիմիան, կենսաքիմիան, երկրաբանությունը, սեյսմաբանությունը, ֆիզիոլոգիան, բուսաբանությունը, կենդանաբանությունը, միկրոբիոլոգիան, ագրոքիմիան և այլն։

Ակադեմիայի մասնակցությամբ Հայաստանում կազմակերպվել են գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկայի, մեքենաշինության, քիմիական տեխնոլոգիայի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, սարքաշինության, կաբելային տեխնիկայի, մանրէաբանության, հիդրոտեխնիկական կառույցների մի շարք ճյուղային արտադրություններ, որոնք կարևոր տեղ ունեն հանրապետության ժողովրդական տնտեսության համալիրի մեջ, շատ խոշոր ձեռնարկությունների ստեղծման հետ կապված գիտական հիմնահարցերի լուծման խնդրում։

ՀԳԱ համախմբեց հանրապետության գիտական ուժերը՝ լուծելու ժողովրդական տնտեսության և գիտության զարգացման կարևորագույն խնդիրները։ Ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունների բնագավառում ստեղծվեցին գիտահետազոտական հիմնարկներ, ձևավորվեցին տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունեցող գիտական նոր ուղղություններ։

Հասարակագիտական գիտությունների մեջ գլխավորը հայագիտության խնդիրների մշակումն էր։ Հայոց պատմության, լեզվի ու մշակույթի զարգացման հարցերի ուսումնասիրությունը ուղեկցվեց գիտական բարձրորակ կադրերի պատրաստմամբ և բազմաթիվ մենագրությունների հրապարակումով։ Հիմնադրվեցին գիտական պարբերական նոր հանդեսներ։ ԳԱ համակարգում ընդգրկված մասնագետների աշխատություններում ուսումնասիրվել են հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության պրոբլեմները։ Մեծ աշխատանք է կատարվել Հայկական գաղթավայրերի պատմության ու հայ և ռուս ժողովուրդների բազմադարյա կապերի ուսումնասիրության գծով։ Հրատարակվել են՝ «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ գրականության պատմություն» և Հայոց լեզվի պատմությանը նվիրված բազմահատորյակներ։ ԳԱ համակարգի մեջ ընդգրկված գիտահետազոտական ինստիտուտներում բուհական համակարգի կենտրոնների հետ սերտ համագործակցության մեջ ուսումնասիրվել և հրապարակվել են հայ ազգագրությանը, հնագիտությանը, արևելագիտությանը, հոգևոր ու նյութական մշակույթների ուսումնասիրության բնագավառների բազմաթիվ պրոբլեմներին նվիրված հետազոտություններ։ Հրատարակվեցին կարևոր աշխատություններ նաև Հայկական հարցի, հայերի ցեղասպանության, XIX դարի հայ ազատագրական շարժման և նոր պատմության մյուս հարցերի վերաբերյալ։

Հայաստանի ակադեմիայի գիտական հիմնարկները տասնամյակներ շարունակ աշխատել են Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի, Մինսկի, Վիլնյուսի, Ռիգայի, Տալլինի, Քիշնևի, Տաշքենդի, Ալմա-Աթայի, Աշգաբադի, Դուշանբեի, Բիշքեկի և ԽՍՀՄ մյուս գիտական կենտրոնների գիտնականների հետ սերտ համագործակցությամբ։ Մշտական է եղել միութենական գիտությունների ակադեմիայի բազմակողմանի օգնությունը, որն ընդգրկում էր գիտական աշխատանքի կազմակերպման, հետազոտությունների կատարման կարևորագույն հարցերը։ Գիտական նստաշրջաններում, սիմպոզիումներում, կոնֆերանսներում և նիստերում, բազմաթիվ հանդիպումների ժամանակ համատեղ քննարկվում էին գիտության հետագա զարգացման համար առաջնահերթ խնդիրները, կատարվում էր գի-

տական ինֆորմացիայի փոխանակում, մշակվում և իրականացվում էին միջոցառումներ գիտական սարքավորման, ուժերի և հնարավորությունների ավելի նպատակահարմար օգտագործման ուղղությամբ։ Հայաստանի ակադեմիայի շատ աշխատակիցներ սիստեմատիկաբար գործուղվում էին երկրի միութենական և հանրապետական մյուս ակադեմիաների դիտական հիմնարկները, տեղում անմիջականորեն ծանոթանում գիտության նոր նվաճումներին, տիրապետում գիտական հետազոտության նոր մեթոդներին։ Իր հերթին ամեն տարի Հայաստանի գիտությունների ակադեմիա էին հաճախում երկրի մյուս ակադեմիաների գիտական հիմնարկների բազմաթիվ աշխատողներ, ծանոթանում հայ գիտնականների նվաճումներին։

Ինչպիսին է վիճակն այսօր։ Չնայած մեզ հայտնի մի շարք անբարենպաստ հանգամանքների մեր ակադեմիան այնուամենայնիվ գիտական կապերի ու համագործակցության պայմանագրեր է կնքել Ռուսաստանի, Ուկրաինայի և այլ ակադեմիաների հետ։ Ավելին։ Այն դարձել է գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի անդամ։

Գիտական համագործակցության պայմանագրեր են կնքվել Գերմանիայի, Հունգարիայի, Մեծ Բրիտանիայի և Իսրայելի գիտական կենտրոնների հետ, աշխատանքներ են տարվում սերտ կապեր ստեղծելու ՀԳԱ և Ֆրանսիայի, Մեքսիկայի, Արգենտինայի և մի շարք այլ երկրների ակադեմիաների միջև։ Արտասահմանյան գիտական կազմակերպությունների հետ գիտական կապեր են հաստատել ԳԱ շատ ինստիտուտներ, գիտական աշխատողները մասնակցում են տարբեր երկրներում տեղի ունեցող միջազգային գիտական համաժողովներին, կոնֆերանսներին, գիտական նստաշրջաններին։

Անվիճելի են այն հաջողությունները, որ իր 50-ամյա գործունեության տարիներին գիտության զարգացման բնագավառում ձեռք է բերել ակադեմիան։ Սակայն ճիշտ չէր լինի, եթե չնկատեինք այն բացթողումները, թերությունները ու սխալները, որ տեղ են գտել ակադեմիայի գործունեության մեջ։ Դրանց մի մասը կարելի է բացատրել Հայաստանում վերջին տարիներին ստեղծված ծանր իրադրությամբ, բայց քիչ չեն նաև այնպիսիները, որոնց պատճառը ՀԳԱ նախագահության, բաժանմունքների բյուրոների, ինստիտուտների դիրեկցիաների թույլ աշխատանքն է։ Խիստ կենտրոնացված ղեկավարությունը, որը գիտության կազմակերպման նախնական շրջանում ինչ-որ չափով կարելի էր արդարացնել, հետզհետե այնքան «կենտրոնացվեց», որ չէր կարող չծնել մարդկանց նախաձեռնությունը կաշկանդող իրավիճակ։

Գիտակազմակերպչական փոփոխությունների անհրաժեշտությունից ելնելով 1994 թ. ապրիլին ընդունվեց ՀՀ ԳԱԱ նոր օրինադրությունը, որը նախօրոք քննարկվել և հավանության էր արժանացել ինստիտուտներում, բաժանմունքներում, նախագահությունում և ակադեմիայի ընդհանուր ժողովում։

Ակադեմիայի գործունեությունը վերջին մի քանի տարիներին ընթանում է նոր իրադրության մեջ։ 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, հիմնադրվեց Հայաստանի Երրորդ հանրապետությունը։ Բնականաբար, ակադեմիայի առջև դրվում են

նոր խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է պետական հովանավորություն։

Ազգային ակադեմիայի գործերը, կապված Հայաստանում առկա տնտեսական ծանր պայմանների հետ, նախանձելի չեն։ Ճիշտ է, հանրապետության ղեկավարությունն սկսել է ավելի շատ ուշադրություն նվիրել ակադեմիային։ Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի 1993 թ. մարտի 9-ի հրամանագրով ակադեմիան պետության հովանավորության տակ է վերցվել, այն ճանաչված է ինքնակառավարվող հաստատություն, հանրապետության գիտատեխնիկական մտքի գլխավոր կենտրոն, որը կոորդինացնելու է հիմնարար գիտական հետազոտությունները հանրապետությունում և հանդիսանալու է կառավարական կառուցվածքների պաշտոնական գիտական կոնսուլտատիվ մարմին։ Ակադեմիայի առաջարկությունները անպայմանորեն պետք է քննարկվեն համապատասխան պետական գերատեսչություններում։ Հանրապետության ազգային ակադեմիայի այսպիսի կարգավիճակը բարձրացնում է նրա հեղինակությունը և հնարավորություն է տալիս նրան ավելի ակտիվ ազդեցություն ունենալ հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքի վրա։

ՀՀ ԳԱԱ առջև, ինչպես արդեն նշեցինք, կանգնած են լուրջ և կարևոր շատ խնդիրներ։ Ակադեմիան պետք է անի ամեն ինչ, որպեսզի ապահովվի Հայաստանի Հանրապետության ժողովրդական տնտեսության գիտական սպասարկման ժամանակակից մակարդակը՝ իր մնայուն ներդրումը կատարելով հայ ժողովրդի հետագա բարգավաճման, նրա սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի զարգացման գործում։

## ПЯТЬДЕСЯТ ЛЕТ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

*Президент НАН РА Ф. Т. САРКИСЯН*

### Резюме

Академия наук Армении, основанная в ноябре 1943 г., в грозные дни Отечественной войны, открыла новую славную страницу вековой истории научной мысли и культуры армянского народа. Большую роль в деле создания армянской академии сыграла Академия наук Советского Союза. Академия наук Армении, в состав которой вошли выдающиеся армянские ученые и деятели культуры, за 50 лет достигла значительных успехов как в области естественных, технических, так и в области общественных наук, в частности, арменоведения. На протяжении ряда лет Академией руководили знаменитый арменовед-востоковед, первый президент Иосиф Орбели, а затем — долгие годы всемирно известный астрофизик Виктор Амбарцумян. В деятельности Академии, конечно, было и есть немало недостатков. В настоящее время Академия переживает серьезные материально-финансовые трудности. Мы надеемся, что с помощью руководства Республики эти трудности будут преодолены и Национальная Академия наук внесет свой вклад в дело экономического и научно-культурного развития нашей республики.

## THE 50TH ANNIVERSARY OF THE ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

*President of the NAS of the RA F. T. SARGISSIAN*

S u m m a r y

The Academy of Scien.es of Armenia, founded in November 1943, in the menacing days of the Patriotic War, opened a new and glorious page in the ancient history of science and culture of Armenian people. The Academy of the Soviet Union had its great contribution in the foundation of Armenian academy. The Academy of Sciences of Armenia, the staff of which represented prominent Armenian scientists and cultural figures, within 50 years achieved considerable successes both in natural, the technical and in the social sciences, especially in Armenology. For a number of years the Academy was headed by its first president Hovsep Orbeli, an outstanding Armenologist-orientalist, for a long time, then, by the world-known austrophysicist Victor Hambarisumian. There were and are, indeed, plenty of defects in the activity of the Academy. At present the Academy has serious material-financial problems. We hope, that these difficulties will be overcome with the help of the guidance of the Republic and the National Academy of Sciences will have its contribution in the economic and scientific-cultural development of our Republic.